ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան 0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

«29» մայիսի 2025թ. N 805-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵԼՔԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշմամբ հաստատված հավելվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում գրանցված որոշ օդանավ շահագործողներին կանոնավոր օդային հաղորդակցություններ իրականացնող փոխադրողներ նշանակելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 25.10.2024 թվականի N 2559-Ա հրամանը, «ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի մարտի 24-ի թիվ 120.24-03/25 և ապրիլի 28-ի թիվ 175.28-04/25 գրությունները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի վճարումից ազատել հետևյալ ուղղություններով.

1) «ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊ ընկերություն (Երևան -Պաֆոս - Երևան 11.06.2025թ. մինչև 11.06.2028թ., Երևան - Քյոլն - Երևան 31.03.2025 թ. - 31.03.2028 թ.):

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել

սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքում:

3. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետի պարտականությունները ժամանակավոր կատարողին՝ ապահովել սահմանված կարգով հրամանի օրինակի տրամադրումն Ընկերությանը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին արձակման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

4/29/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ք. Երևան